

Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար

_____ Վ. Գաբրիելյան

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահ

_____ Գ. Խաչատրյան

24 օգոստոսի 2011թ.

N 37

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՀԱՇՎԱՐԿԵԼԻՍ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԸ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին>> ՀՀ օրենքի 4-դ հոդվածի 1-ին մասի <<զ>> կետի համաձայն անհատ ձեռնարկատերերի (ձեռներեցների) սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտներն են տարեկան համախառն եկամուտները, որոնցից նախապես նվազեցվում են <<Եկամտահարկի մասին>> ՀՀ օրենքով սահմանված եկամտի առանձին տեսակների ստացման հետ կապված ծախսերի և նվազեցվող եկամուտների գումարը՝ առանց հաշվի առնելու անձնական նվազեցումները:

<<Եկամտահարկի մասին>> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի <<ե>> կետի համաձայն ծախսերի թվին են դասվում չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները:

<<Հաստատագրված վճարների մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն հաստատագրված վճարը օրենքով նախատեսված չափերով և ժամկետներում հաստատագրված վճար վճարող ֆիզիկական անձանց կողմից պետական բյուջե վճարվող ավելացված արժեքի հարկին և եկամտահարկին փոխարինող պարտադիր և անհատույց վճար է:

Հաշվի առնելով վերը նշվածը և ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, **պաշտոնապես պարզաբանում եմ.**

Հաստատագրված վճար վճարող անհատ ձեռնարկատերերի կողմից ձեռնարկատիրական գործունեությունից ստացված համախառն եկամուտը հանդիսանում է պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման օբյեկտ (որոնցից նախապես նվազեցվում են <<Եկամտահարկի մասին>> ՀՀ օրենքով սահմանված եկամտի առանձին տեսակների ստացման հետ կապված ծախսերի և նվազեցվող եկամուտների գումարը՝ առանց հաշվի

առնելու անձնական նվազեցումները): Ընդ որում՝ համախառն եկամտի մեջ ներառվում են հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից ստացված եկամուտները և համախառն եկամտից նվազեցվում են այդ եկամուտների ստացման հետ կապված ծախսերը, իսկ հաստատագրված վճարի գումարները համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն: